

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՆԱՐՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԿՈՉՅԱՆ
պապմական գիտ. դոկտոր

ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՈՌԱՅՎԱԾ ԵՐԱԽՏԱՎՈՐ Գ. ԿԵՌԻ ՆԱՄԱԿԸ «ՆԱՅՈՑ ԵՊԻՄԿՈՂՈՍԻՆ»

Արևելագիտական նյութերի ուսումնասիրության ընթացքում մեր ուշադրությունը գրավեց մի փաստաթուղթ, որը, ամենայն հավանականությամբ, պակավին ոչ ոք չէր ընթերցել: Փաստաթղթի հեղինակը գերմանացի նշանավոր արևելագետ Գ. Կեռն է (1692-1740 թթ.), որը 1732 թվականին Ռուսաստանի գերագույն գործերի կառավարիչ կոմս Անդրեյ Օստերմանի կողմից հրավիրվել է Ռուսաստան, այնպեղ հիմնադրել դասական արևելագիտության կենտրոն և դարձել դրա առաջին ղեկավարը: Փաստաթուղթը սեւագրությունն է մի նամակի, որը գրված է արաբերենով և, անկասկած, հերաքրքրություն կառաջացնի արևելագետների ու հայագետների շրջանում: Նշենք, որ գիտնականի մահից հետո նրա գործերի հետ նաև փաստաթղթերը տեղ են գտել Ռուսաստանի արքայաքին գործերի նախարարության մոսկովյան գլխավոր արխիվում¹: Այնպեղ դրանք արձանագրել է արխիվի տնօրեն իշխան Տ. Ա. Օբոլենսկին, որն արևելյան լեզուներին չէր տիրապետում: Ավելի ուշ նույն արխիվում աշխատանքի է անցնում ռուսական հպատակություն կրող արաբ քրիստոնյա Ջրջի Աբրահամ Մարկոսը (1846-1911 թթ.), որը, իհարկե, կարող էր ընթերցել վերոհիշյալ փաստաթղթերը, սակայն դրանց ուշադրություն չի դարձրել: Այսպիսով, կարելի է ասել, որ այս փաստաթուղթն առաջին անգամ է շրջանառվում գիտական աշխարհում: Այն գերելված է Ղնագույն փաստաթղթերի ռուսական պետական արխիվի ֆոնդ 191-ի, պահպանման միավոր 11-ի 15-րդ և 35-րդ թերթերում: Այն մաքրագրի տպավորություն էր թողնում, սակայն մեզ անհայտ ինչ-ինչ պատ-

¹ Տե՛ս Մ. Շուպայովի՝ 1893 թ. Մոսկվայում հրատարակած արխիվային «Ժողովածուի» ինգերորդ պրակը, էջ 91:

ճառներով չի գոհացրել հեղինակին, որը բազմաթիվ հավելումներ է կատարել նամակում՝ մաքրագիրը վերածելով սևագրի:

Նամակի՝ փոխաբերություններով և մակդիրներով հարուստ լեզուն համապարասխանում է ԺԸ. դարի առաջին կեսի երոպական արաբագիրության մակարդակին: Կարելի է նշել, օրինակ, բազմաթիվ սխալների, ոչ ճկուն, անսովոր արաբականացված երոպական դարձվածքների, անունների ու եզրերի առկայությունը: Այնուամենայնիվ, փաստաթղթի լեզուն ընդհանուր առմամբ դժվարություն չի առաջացնում:

Ավելացնենք, որ նյութական սուղ միջոցներն են Գ. Կեոին հարկադրել խնդրանքով դիմելու նամակի հասցեատեր եպիսկոպոսին՝ արևելյան երկրներ ճանապարհորդելիս իրեն խմբի անդամ դարձնելու նպատակով: Գ. Կեոին այդպես էլ չի հաջողվել ճանապարհորդել դեպի Արևելք, և նրա մրադրության անկատար մնալու հանգամանքները տակավին պարզաբանված չեն: Բոլոր դեպքերում, կարծում ենք, որ հրապարակելով նամակն իբրև փաստաթուղթ՝ հայ արաբագիրության և ընդհանրապես հայագիրության պարսմության մեջ՝ ապագայում հեղինակի վերաբերյալ կհայտնվեն նոր տեղեկություններ: Սպորեկներկայացնում ենք նամակի² թարգմանությունը.

**ՀԱՆՈՒՄ ԲԱՐԵԳՈՒԹ ԵՒ ԲԱՐԵՐԱՐ ԱՍԾՈՒ,
ԵՌԵ ՀԱՃՈ Է ԱՍԵՆԱԲԱՐԶՈՅՅԱԼ ԱՍԾՈՒՄ.**

Աստվածային խոսքի վարպետ, քերթողահայր, արդարադատ, աստվածային օրենքների գիտակ, բնական եւ աստվածային գիտություններին լավատեղյակ, ճշմարտասեր, քրիստոնեական վարդապետություն չունեցող, մոլորյալներին դարձի բերող, պատվաբաժան լուսավորիչ՝ Հայոց քրիստոնյա աշխարհի բարեպաշտ եպիսկոպոս, Աստծո օրհնանքը թող միշտ ձեզ հետ լինի:

Թող ցանկալի լինի Բարձրյալին եւ [նամակը] հասցնի Ֆրանկֆուրտ, հանձնի Հայոց Մեծն Տիար եպիսկոպոսի ձեռքը:

Խաղաղություն Ձեզ, Աստծո գթությունը թող լինի Ձեր վրա, եւ Հիսուս Բրիստոսի սերը թող ավելացնի Սուրբ Հոգու բարիքները:

Ո՛վ Դուք, Աստծո խոսքի ու գաղտնիքների քաջագիտակ, աստվածային իրավունքի տեր եւ քրիստոնեություն ուսուցման վարպետ:

2 Նամակի հասցեատերը կրում է լատիներեն և հայերեն հետևյալ փափուկ՝ «Եպիսկոպոսի սրբոյ աթոռոյն ողջոյն ի Բրիստոս յԲրանկֆորտ», «Episcopo Reverendissimo, qui ex Ecclesia Armenica in Orienta aduenit Francofurti ad Moenum»: Նույն փափուկն առկա է նաև հունարեն ու արաբերեն մասամբ եղծված ու ջնջված փաթեթով:

Ո՛վ Դուք, գիտելիքների գաղտնարան, աստվածային խոսքին հետեւող, մեծն ուսուցիչ քրիստոնեության եւ աստվածային օրենքների նվիրյալ, դիմում եմ Ձեզ՝ խնդրելով, որ հետեւեք խոսքերիս, որոնք գրել եմ ի սրտե, եւ կարգաք գոհունակությամբ:

Լսելով, որ հասել եք պահպանյալ քաղաք՝ Ֆրանկֆուրտ՝ կառուցված Մայն գետի վրա, տեղեկացնում եմ Ձեզ, որ խոնարհ սրտով ջանացի Ձեզ գրել մեր համատեղ հոգեւոր փրկությանն ի շահ՝ ուրախությամբ ակնկալելով, որ Դուք բարեհամբույր կգտնվեք եւ ինձ կդարձնեք ձեր ճանապարհորդությանը մասնակից: Ես ամեն օր երազում եմ Ձեզ հետ ճամփորդել Արեւելքի երկրներում, ուսումնասիրել արեւելյան լեզուներ, իսկ ճանապարհորդության վերջում հայ վաճառականների հետ ուղեւորվել դեպի Հալեպ, Անտիոք, Դամասկոս, Երուսաղեմ, Ադեն, Սանա (Եմենում), Բահրեյն, Բասրա, Բաղդադ (այս քաղաքում կան էմիրություններ, որոնք քրիստոնյա ընտանիքներին կարող են մեծ օգնություն ցուցաբերել), Իսպահան (Պարսկական թագավորությունում), Աստրախան (Թաթարական քաղաք), այնտեղից անցնել ուղբեկների երկիրը, Բուխարա, Հնդկաստան եւ արեւելյան մնացյալ երկրները: Յանկանում եմ կապ ունենալ արեւելյան երկրների գիտնականների, իմաստունների հետ, խորությամբ ուսումնասիրել արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, հնդկերեն, հայերեն, վրացերեն եւ այլ լեզուներ: Յանկանում եմ արաբներին, պարսիկներին, հնդկներին, բուխարացիներին, մոնղոլներին, թանղուտներին սովորեցնել Աստծո խոսքը, ուսումնասիրել եւ հասկանալ Արեւելքի շատ ժողովուրդների լեզուներ: Ուզում եմ ծանոթանալ արեւելյան ժողովուրդների փիլիսոփայությանը, աշխարհագրությանը, բնագիտությանը եւ այլ գիտություններին, լատիներենի, գերմաներենի, ֆրանսերենի, ֆլամանդերենի լեզվաբանությանը: Յանկանում եմ նաեւ երիտասարդ հայ տղաներին ու աղջիկներին ծանոթացնել քրիստոնեական վարդապետության հետ:

Ես կարգացի, որ Սաքսոնիայից մի խումբ լյութերական քարոզիչներ (միսիոներներ) հնդկական Մալաբար քաղաքում անհավատ հինդուսներին եւ մուսուլմաններին արտագրել էին տալիս Աստվածաշունչը: Եւ ես ցանկանում եմ մոտ ժամանակներս զբաղվել նրանց պատմությամբ: Իրապես էլ հայ բազմաթիվ վաճառականներ ցանկանում են ուսուցիչ ունենալ, եւ ես շատ եմ փափագում, որ նրանք ինձ վերցնեն իրենց հետ ու տանեն իրենց հայրենիքը, պարսկական Իրաք, որպեսզի Քրիստոսի պատվիրանները սովորեցնեմ իրենց տղաներին ու աղջիկներին, որով-

Հետեւ քրիստոնյաներից շատերը գրագետ չեն եւ ոչինչ չգիտեն այդ մասին: Նրանք միայն պաշտում են Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն: Եւ նաեւ ցանկանում եմ այցելել իմ ընկերներին, որոնց անուններն են Ղուրբունգլար, Շուլց, Դայլ ու Կիստնմախեր: Նրանք Դանիական թագավորությունում էին եւ Անգլիայում, իսկ Գերմանիայից նրանց ուղարկել են անհավատ Հնդկաստան՝ Մալաբար, որպեսզի արտագրեն Աստվածաշունչը...

Ցանկանում եմ նաեւ այցելել իմ երկու ուսուցիչներին, որոնք Հալլեի դպրոցում՝ Սաքսոնիայում, ինձ սովորեցրին արաբերեն, պարսկերեն, ասորերեն. նրանց անուններն են՝ Սուլեյման ալ - Ասվադ ալ - Դիմաշկի եւ Կարլոս Ռալի Դադիխի ալ - Հալաբի: Նրանք քրիստոնեական աղանդից էին:

Ո՛վ իմ հարգարժան Տիար, ես հայցում եմ Ձեր բարյացակամությունը, խնդրում, որ պատիվ անեք եւ նամակ գրեք ինձ ու հայտնեք Ձեր պատասխանը: Եւ եթե կարելի է, կանչեք ինձ Ձեզ մոտ, որ ծառայեմ Ձեզ որպես թարգմանիչ Արեւմուտքում, Գերմանիայում, Սաքսոնիայում, Շվեդիայում, Դանիայի թագավորությունում, Ֆլամանդիայում եւ Անգլիայում: Որից հետո ցանկանում եմ անգլիական կամ ֆլամանդական նավով ճամփորդել Ձեզ հետ դեպի Արեւելք՝ Սիրիա, Եգիպտոս, Մադրիդ, արաբական Իրաք եւ պարսկական Իրաք: Եւ եթե ցանկանում եք, կարող եմ Ձեզ ծառայել որպես թարգմանիչ, քարտուղար կամ նման մեկ այլ ծառայության մեջ:

Միշտ պատրաստ եմ ծառայել Ձեզ:

(Սյորագրությունը արաբերեն)



السلام عليكم فوجرة أمية وحنينة سينا يسوع المسيح
وكثير بركات الرب القدير لكم

بِأَخْبَرِ عَلِيٍّ الشَّامِ مِنْ كَلِمَةِ آتِهِ مُتَلَعًا وَمُعَلِّمًا
التَّعْلِيمِ أَسِيحِي وَمُصَاحِبِي أَخِي الْإِلَهِي

سَأَلَكُمْ لِيَتَّبِعُوا الْإِهْدَاءَ لِلْخَلَاءِ الَّتِي كُنْتُمْ
لَكُمْ مِنْ قَبْلِ خُضُوعٍ وَلَنْ تَقْرَأُوا بِرَأْسِهِمْ

من جدد ما سجدوا وصلىتم الى المدينة المحرسة
اسموا افرانكفوز الف منبته على صرح الزمر

إني بحياة النعماني جنته منة الله
على المؤمنين أهل مكة خلا ما ساء المحر

انتم خير الى الناس منكم السعيدون
انتم في سعة الايدي على كل يوم انتم خير

مَعَدَّةَ الْيَدِ الْيَمَانِ الشَّرِيفَةِ خَالِكَ أَنْعَمَ النَّاسِ
الْشَّرِيفَةِ وَأَنْ لِّسَانٍ مِنْ جَدِّ فَكُنْ مَعَ خَلِّدٍ

إلى يميني حلب وأقطاعها حشقت وإلى يساري
لغس وراصعها ولا أستراخان وإن لمضي

وہ خداوند

طوبى لمن شرب من ماء زمزم عذباً أو شرب من ماء زمزم
الحسين أو شرب من ماء زمزم أو شرب من ماء زمزم
بشره في الدنيا والآخرة من الجنة أو شرب من ماء زمزم
ما كان إلا على القدر الذي قال في كتابه الكريم
فمن شرب من ماء زمزم أو شرب من ماء زمزم
شرب من ماء زمزم أو شرب من ماء زمزم

وَاللَّيْلِ وَالنَّجْمِ وَالْجَبَلِ وَالْشَّجَرِ وَاصْبِرْ صَبْرًا جَدِيدًا

من الخصال
نقلنا من كتابه
من الخصال

وَبِأَنَّهُم يُعْرَفُونَ الْجِنَّةَ إِنَّمَا يَدْخُلُونَهَا إِذَا مَا أُقْبِلَتْ السَّجُودُ
وَبِأَنَّهُم يُعْرَفُونَ الْجِنَّةَ إِنَّمَا يَدْخُلُونَهَا إِذَا مَا أُقْبِلَتْ السَّجُودُ
وَبِأَنَّهُم يُعْرَفُونَ الْجِنَّةَ إِنَّمَا يَدْخُلُونَهَا إِذَا مَا أُقْبِلَتْ السَّجُودُ

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ
الْحَمْدُ لِلَّهِ الَّذِي هَدَانَا لِهَذَا وَمَا كُنَّا لِنَشْكُرَهُ لَوْلَا رَحْمَتُ اللَّهِ عَلَيْنَا لَكُنَّا مِنَ الْخَاسِرِينَ

کتاب و سنت کے خلاف شور مچانے والے لوگوں کو روکنا

يَقْدِرُونَ يَخْطِئُوا لَكُمْ مَغْفِرَاتِي عَلَى الْمَشْرِقِ وَالْمَغْرِبِ

وَاللَّهُ أَعْلَمُ بِمَا فِي قُلُوبِهِمْ



РЕЗЮМЕ

Керъ Г. Я. 1692 -1740 – первый в России ориенталист, уроженец Германии, изучал восточные языки в Галле. Керъ издал в Лейпциге “ *Dissertatio de Saracenis, hagarenis et Mauris* “ (1723); *Monarchiae asiatico-saracenicae status, quails VIII et IX post. chr.natum saeculo fuit etc.*” (1724); *Monarchiae Mongolo-indici vel Mongolis Magni Aurenz Szeb numisma etc.*” (1725). В 1732 г. Керъ, по приглашению вице-канцлера Остермана прибыл в СПб. и был назначен переводчиком арабского, персидского и турецкого языков при коллегии иностранных дел, с обязательством обучать этим языкам русских юношей (для чего из московской славяно-греко-латинской школы выписано было 6 учеников) и жалованьем в 400 руб. обещана ему была, сверх того, награда по 100 руб. за каждого обучившагося студента, по ее ему ниразу не пришлось получить. Труды Кера за время пребывания его в России остались в рукописях, которые хранятся в московском главном архиве министерства иностранных дел. Глубокий знаток Востока, Керъ первый доказал, что куфические письма – не что иное, как древния арабския; перевел на немецкий язык Абу-л-гази-Багадур-хана; составил сборник 137 азбук с приведенной на них молитвой Господней (Эта рукопись в 1876 г. издана на средства туркестанского генерал-губернатор К.П. фон Кауфманна, в количестве 45 экземпляров) и большую коллекцию восковых и сургучных оттисков с восточных монетъ. всего замечательнее составленный Кером на латинском языке , в проекте “учреждения восточной Академии в СПб.” (Русский перевод его напечатан савельевым в “ж. М. Н. Пр” 1856 г., N 2), необходимость которой он мотивировал не только потребностями дипломатической службы, но и просветительной миссией Россия на Востоке, а равно важностью восточной источников для изучения истории России. Биографию Кера написал М. Шувалов в 1893 г.

S U M M A R Y

Within the formation of my plan-works my attention was attracted to a European Armenian community with a letter, which nobody had read it. The author of this letter was a German orientalist G. Ya. Kehr (1692-1740), which in 1732 by the invitation of vice cansler Ostermann came to Saint- Peterburg. He was appointed, there he founded classical oriental centre and became its first chief. The document

is a copy of a letter, which was written in Arabic which would interest orientalists as well Armenists. After his death his archive was found at the Russian Foreign Ministry (See M. Shuvalov in 1893 printed in Moscow's Archives Vol. V, p. 91). These documents were printed by T. Obolevsky, which did not understand the oriental languages. Later at the same archive begins to work an arab christian Girgi Ibrahim Murgos (1846- 1911), of course he could read these documents, but he did not pay any attention. So we can verify that this document for the first time became quite interesting. The document occupies in the Ancient State Acts Archive Fond 191 pp. 11, 15 and 35. The document was in a very clean state, we do not understand what happened that it turned to be so scattered and with such additions in the text. We would like to add, that G. Ya. Kehr did not succeed to journey to the East, and the purpose why this circumstance did not take place, maybe some documents may appear and give us some new informations in future.